Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 656 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՈՆՏԱԺՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մայիսի 22-ի N 363 - Ա որոշման համաձայն բարեգործական է որակվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» Պետական ոչ առևտրային կազմակերպության կենցաղային պայմանների բարելավման նպատակով պրոֆեսիոնալ լվացքատան սարքավորումների ձեռքբերման ծրագիրը: Այժմ անհրաժեշտ է սարքավորումների միացման համար կատարել կոմունիկացիոն համակարգերի մոնտաժման աշխատանքներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, բնագավառ՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	1, 680,230.25 դրամ

7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2024 թվականի հունվարի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորքի տուն-ինտերնատ» Պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսիոնալ լվացքատան սարքավորումները կոմունիկացիաներին մոնտաժման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև 2024 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում, արժեքը՝ 1,680,230.25 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Էլեկտրական մալուխների անցկացում, լվացքի մեքենաների, չորանոցի և գլանային արդուկի մոնտաժում, ինչպես նաև խողովակների անցկացում և մոնտաժում: Արժեքը՝ 1,680,230.25 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ